



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՆՈՐԱՀԱՅԻ ԱՐԱԲԵՐԵՆ ՀԱՄԱՌՈՏՈՒՄԸ

գանթագեղոսի արաբական խըմ-
րագրության մի օրինակն առա-
ջին անգամ հայտնաբերվեց Ն.
Մատի կողմից Եգիպտոսում, Սի-
նայի անապատի Ս. Կատարինե
վանքում, և հայտարակվեց 1905 թվականին
արաբերեն բնագրով, թարգմանությամբ և
ուսումնասիրությամբ¹, Արաբերեն Ազաթան-
գեղոսի գյուտի առթիվ Մառլ ընդհանուր
ըննարկման ենթարկեց Ազաթանգեղոսի զա-
նազան խմբագրությունների հարցը, և հան-
գեց այն եզրակացության, որ հնագույն խըմ-
րագրությունը կորած է, իսկ երկրորդ հայե-
րեն խմբագրությունը կատարվել է Տայքի
քաղեգունիկ հայերի շրջանակում և թարգ-
մանվել է Հունարեն, որից և կատարվել է այս
արաբերեն թարգմանությունը: Մեզ հասած
հայերն խմբագրությունը նա համարում է
ազգային շրջանակներում հորինված և ավելի
ուշ շրջանի լ դարի շարադրանք: Այս կար-
ծիքը հետագայում քննադատվեց Ս. Մալ-
խասյանի կողմից և ցուց տրվեց, որ հայերն
Ազաթանգեղոսի մեզ հասած խմբագրությունը
ոչ թե լ, այլ ե դարից²:

1 Ն. Մառ, «Մկրտութիւն հայոց, վրաց, արիազաց և
ալանաց ի Սրբոյն Գրիգորէ», Պետքրուրդ, 1905: —
Կա արաբերեն բնագրի հայերեն թարգմանությունը,
Վաղարշապատ, 1911:

2 Ս. Մալխասյան, «Հայերեն և արաբերեն Ազաթան-
գեղոսները», «Էջմիածին», 1946, № 11—12: — Տե՛ս
Հ. Անապան, «Հայկական մատենագիտություն», Երե-
վան, 1959, Ա, էջ 183—184.

Վերջին երկու տասնամյակների ընթացքում
Ազաթանգեղոսի հոնարեն թարգմանության
և դրանից կատարված թարգմանությունները
(արաբերեն, վրացերեն և այլն) հարցի շուր-
ջը շահեկան ուսումնասիրություններ հրա-
տարակեց հայագետ պրոֆ. Ժ. Գառիթը (Քել-
դիա): Հունարեն Ազաթանգեղոսը մինչև այժմ
հրատարակվել է երեք օրինակներով՝ Լավ-
րենտյան (Ֆլորենցիայի), Մետաֆրաստյան
(Վատիկանի) և վերջապես Մադրիտյան, որի
հրատարակիչը հենց ինքը՝ Ժ. Գառիթն է:
Վերջինս կարծում է, որ այս բնագիրը հայե-
րենից է թարգմանվել և հիմք է ծառայել ա-
րաբական թարգմանությանը: Սույն բնագրի
հրատարակումից մի քանի տարի հետո Գա-
ռիթը Եգիպտոսի նույն Ս. Կատարինեի վան-
քում գտնում է Ազաթանգեղոսի ևս մի արա-
բական թարգմանությունը, որը մտնում է
1328—1329 թվականներին գրված մի արա-
բերեն ձեռագրի մեջ: Սա պարունակում է մի
քանի սրբերի վարպեր, որոնք մտնում են ա-
րաբական քրիստոնյա «Հայսմավուրբ»-ի մեջ:
Այս ձեռագրի 134—213 էջերը զրադեցնում
է Ազաթանգեղոսի «Պատմություն»-ը հետե-
յալ վերնագրով.

«Նկարագրություն մեր Սուլրը Հոր Գրիգո-
րիոսի Մեծ Հայք երկրի եպիսկոպոսի, Անակ-
պարսկի որդու, Հայոց արքա Խոսրովի ազգա-
կանի, և Գայանեի, Հոփիսիմեի ու նրանց
ընկերունի միանձնութիւնների՝ Մեծ Հայքում
նահատակության: Ըստ Գառիթի, առ արա-
բական մի նոր տարրերակ է, որն անկախ է
Մատի կողմից հրատարակված արաբերեն

Ազաթանգեղոսից և անկասկած թարգմանված է հոնարենից: Արարական այս նոր Ազաթանգեղոսը պարունակում է Ազաթանգեղոսի «Պատմության» ամբողջ հիմնական բովանդակությունը և դեռ անտիպ վիճակում է:

Տարոմակելով իր որոնումները արարական «Հայսմավուրք»-ի մեջ, Գառիթը ուսումնասիրում է Կահճիրեկի Ղատիների թանգարանում գտնված ժողովական ժողովը մի դարի մի արարական ձեռագրում գտնվող «Սուրբ Գրիգորիոսի» վարքը³, այն համեմատում է Ազաթանգեղոսի այլայլ բնագրերի հետ և գալիս է այն եղանակացության, որ այս վարքը անկախ է բոլոր մեղ ծանոթ արարական տարրերակներից (թե՛ Մառի, թե՛ Հենց իր կողմից հայտնաբերված) և որ սա հոնարեն Ազաթանգեղոսի մի ամփոփումն է: Գառիթը կարծում է, որ այս ամփոփումը կատարված է ոչ թե ուղղակի հոնարենից, այլ կարող էր նախապես խմբագրված լինել պատիրերեն և միայն հետո թարգմանվել արարերեն: Այս ամփոփ վարքի խմբագրը, զիմավոր ուշագրությունը նվիրելով հենց Ս. Գրիգոր Լուսավորչին, շատ անգամ նրա հետ է կապում դեպքերը: Այստեղ Տրդատի խոզացման պատճառը ոչ թե Հոփիսիմյան կոյսերի նահատակությունն է, այլ Ս. Գրիգոր Լուսավորչի խոր վիրապում բանտարկվելը և կամ Նիկիայի ժողովին գնում է ոչ թե Արիստակեսը, այլ հենց ինքը՝ Ս. Գրիգորը և, ընդհանրապես, կրօնականն ու եկեղեցականը տիրապետում են ի հաշիվ պատմական տվյալների: Գառիթը հրատարակել է այս վարքի արարերեն բնագիրը հանդերձ լատիներեն թարգմանությամբ: Մտորեատակիս ենք նրա հայերեն թարգմանությունը:



Մարտիրոսություն պատվական, սուրբ, կատարյալ և բարեպաշտ հոր անբա⁴ Գրիգորիոսի⁵ հայոց պատվարժան պատրիարքի, որը կատարեց սուրբ պատվարը և ստացավ վկայության պատվարը Քիհաք ամսի տասնհինգին⁶: Թող նրա սուրբ օրհնությունը մեզ հետ լինի մինչև վերջին շոմալը: Ամեն:

1 Տրդատ⁷ անհավատ թագավորի օրոք կար մի բարի, սրբակրոն և աստվածավախ մարդ, Գրիգորիոսի անվամբ, որը բարիքներ էր գործում, ծոմ էր պահում և աղոթում առ Աստված գիշեր և ցերեկ: 2 Եվ երբ Սրբուհի

³ Ժ. Գառիթ, «Հայոց Ս. Գրիգորի մի արարերեն վարքը», Մյուլեն, Կե, 1952:

⁴ Անբա նշանակում է հայր (եկեղեցական իմաստով):

⁵ Բնագրում Աղրիկորիոս:

⁶ Այսինքն՝ դեկտեմբերի 11-ին:

⁷ Բնագրում Թիգրագ:

Հոփիսիմեն⁸ և նրան ընկերակցող կույսերը նահատակվեցին այս անհավատ թագավորի ձեռքով, սա հրամայեց գցել նրանց դիակները բաղադրի բլուրների վրա, որպեսզի շները լափեն նրանց: Եվ եկավ Սուրբ Գրիգորիոսը, որպեսզի պատանքով փաթաթի նրանց և հոգտանի: Յ Սակայն արքան այս բանը թույլ շտվեց նրան, այլ հրամայեց բանտարկել նրան մի շոր ցուրտ գրի մեջ Արտաշատ⁹ քաղաքում և ոչ կերակրել նրան ոչ էլ չուր տալ: 4 Եվ այս բանը արեցին ու նետեցին նրան գրի մեջ և այնտեղ նա մնաց տասնհինգ տարի: 5 Խակ Տերը շմոռացավ նրան և կմաց տվեց մի այրի սուրբ կնոջ, որն ամեն օր հաց էր բերում նրան:

6 Այլ Աստված իր բարկությունն իշեցրեց այս անհավատ թագավորի վրա և հրաման տվեց սատանային, իսկ սա խլեց նրան թագավորական աթոռի վրայից և գուրս գցեց դեպի անապատը, գագանների մեջ և շատ տանջում էր նրան: 7 Մի գիշեր, երբ նրա քույրը¹⁰ քնած էր, տեսնում է մի պարթևահասակ և հույժ պնդակազմ մարդու, որը կրում էր արքայական հագուստներ և ձեռքին ուներ ոսկե մական: 8 Խոսեց նրան և ասաց՝ Ով թագուհի, եթե [մարդ] չուղարկեք և Արտաշատի գրից դուրս չերեք Գրիգորիոսին, ձեզ ոչ մի վրկություն չի լինի և եղայրդ երբեք չի բուժվի: 9 Երբ եղավ առավոտ, նա կրկնեց այս խոսքերը նախարարներին և թագավորության ղեկավարներին, իսկ նրանք ասացին՝ Դա երազային ցնորդ է, որովհետև նա, որին հիշեցիր, արդեն տասնհինգ տարի է, որ գրի մեջ է նետված և մենք կարծում ենք, որ այժմ նրա մարմնից ոչ մի սոկոր մնացած չի լինի: 10 Եվ երբ հասավ հաջորդ գիշերը, երևեցավ նրան տեսիլքը ըստ սովորականին և ապա երրորդ անգամ և նա նույն խոսքերը նորից ասում էր նրան: 11 Կրկնեց նրանց (իմա՝ նախարարներին) այս խոսքերը և նրանք անմիջապես բազմաթիվ զորք ուղարկեցին այնտեղ, որպեսզի բերեն Սուրբ Գրիգորիոսին:¹¹: 12 Երբ այնտեղ հասավ, նրան տարան գրի մոտ և կախ տվեցին պարաներն ու գոռացին ասելով Ով սուրբն Աստուծոն Գրիգորիոս:

⁸ Բնագրում՝ Արիկրիմա:

⁹ Բնագրում՝ Արտաշատ (հոնական ձևով):

¹⁰ Տրդատի քույրը:

¹¹ Այստեղ պակասում է Օտա նախարարի մասին հիշատակումը: Հաղորդ նախարարական մեջ խոսք հենց նրան է վերաբերում:

բարձրացավ։ Նայեցին նրա մարմնին, որը սկացել էր տարիների շատությունից։ Բերեցին նրան, շորեր հագրին նրան մեծ ուրախությամբ և դուրս եկան Արտաշատ քաղաքի հողերից ու եկան հասան թագավորի քաղաքը։

14 Քաղաքի ժողովուրդը շատ ուրախացավ նրա գալուատով և վաղեցին նրան դիմավորելու։ 15 Խսկ սատանան գեռ շարունակում էր քարշ տալ թագավորին ուր որ կամենար, մինչև որ նրան բերեց այնտեղ, որտեղ էր Սուրբ Գրիգորիոսը։ Նա խստ տանջում էր նրան, որը մերկ էր և վրան չկար ոչ մի հագուստ։ 16 Թագավորության մեծամեծները և տօրինողները խնդրում էին Սրբին, որ բուժի նրան։ 17 Խմկ Սուրբն Գրիգորիոսը մեղքացավ նրան և աղոթեց այսպես ասելով՝ Ո՞վ Տեր Աստված, արարի երկնի և երկրի, տնասնելի և անտեսանելի բաների, օգնիր ինձ ու փրկիր և փափկացրու այս մարդկանց սրտերը, որպեսզի ճանաչեն քեզ։ 18 Երբ այս ասաց, հարցրեց, թե ո՞րտեղ են նահատակների դիակները և իմացավ ու գնաց նրանց մոտ և օրհնություն ստացավ նրանցից, պատանք արեց նրանց արժեքավոր թագավորական շորերով և դրեց մի մաքուր տեղում, մինչև որ Աստված կկամենար այցելի նրանց։ 19 Եվ երբ եղավ առավոտ, եկան նրա մոտ թագավորության մեծամեծները և խնդրեցին, որ բուժի թագավորին և ասում էին նրան՝ Բուժիր մեզ մեր ախտերից քո Աստվուով։ 20 Ասաց նրանց Սուրբ Գրիգորիոսը՝ իրոք նա է իմ Աստվածը, նա է տվիշը բարիքների, որի համար չկա ժամանակ, նա անսահման է, անփոփոխ, միակն ու եղակին, որն իր գոյության շնորհիլ փրկեց մեզ և իր գթությունը տարածեց մեզ վրա, որովհետև ով որ Կսիրի նրան, նա նրան կառաջնորդի նա է, որ սրանից առաջ էլ կոչ արեց ձեզ որդիներ լինել, նա կրախտավորեցնի ձեզ իր հավիտենական թագավորությամբ և ձեր սրտերը կուրախացնի իր մշտական շնորհներով, եթե հետեւք նրա հրամաններին և պահպաներ նրա պատվիրանները։ 21 Եվ երանելին Գրիգորիոսը այդ օրը ամբողջովին անց կացրեց քարոզելով Աստվուու խոսքը։ 22 Նա անհամար նշաններ ու հրաշքներ ցույց տվեց. բերում էին նրա մոտ հիվանդներին անկողինների վրա, իսկ նա բուժում էր, և մաքրեց շատերի բորոտությունը և լուսավորեց կույրերի աշքերը։ 23 Եվ նա սովորեցրեց նրանց Աստվու ճանապարհը գեպի կատարելություն, իսկ մարդիկ ամեն տեղերից նրան էին դիմում, որպեսզի լսեն նրա խոսքը։ 24 Այս բոլորից հետո եկավ նրա մոտ թագավորը վայրի խոզի կերպարանքով ու զարհուրելի կրնույթով։

25 Ասում է նրանց՝ Լսեցեք, որ պատմեմ ձեզ, ո՞վ եղայրայրներ, իմ տեսած զարմանալի տեսիլքը։ 26 Օրերից մեկում, երբ ես իմ մտքերի մեջ խոկոմ էի, թե ի՞նչ կլինի ինձ հետ և թե ի՞նչ վիճակի կմատնի Աստված իր սրբին, այս ընթացքում հանկարծ ինձ մի ձայն հասավ, նման ահեղ ամպրոպի և խռովագույզ ալիքների ձայնին։ 27 Եվ ահա հանկարծ երկինքը բացվեց և այնտեղ երևաց մի արտասովոր մարդ և խոսեց ինձ ասելով՝ Ո՞վ Գրիգորիոս, ո՞վ Գրիգորիոս։ 28 Ասացի. Ահա այստեղ եմ, Տեր իմ։ Եվ երբ զննեցի և տեսա նրա կերպարանքը, խստ զարդութեցի և ծունկի եկա նրա առաջ։ 29 Նա բարձրացրեց ինձ և ասաց՝ Ո՞վ Գրիգորիոս, նայիր որ տեսնես Աստվուու ուժն ու փառքը։ 30 Եվ լավ նայեցի ու տեսա, որ բացվել է մի ծածկույթ և նրա միջից դուրս են գալիս հսկայական ջրեր հովտի նման, և բարձրացել էին հսկայական լեռների և ամենի բարձունքների պես և տարածվել շատ կողմերով։ 31 Ապա տեսա երկնքից երկրի իշնող մի լույս և բազմաթիվ զինվորներ անհամար, շատ ուժեղ մարդկի, որոնցից ամեն մեկն ուներ երկու շատ երկար թևեր, իսկ նրանց ազնիվ տեսքը չեմ կարող խոսքերով նկարագրել։ 32 Նրանց մեջ էր մի երկար մարդ՝ ձեռքին ուկե մական և ինքն էլ շատ փառավոր, իսկ մյուսները ամենը հետևում էին նրան, և գոռացին շատ բարձր ձայնով, մինչև որ երկիրը խստ դղրդաց։ 33 Եվ թագավորի պալատում կային բազմաթիվ խարիսխներ և նրանց վրա փայլուն լուսեղեն խաչեր։ 34 Տեսա Հոփիսիմեի և նրան ընկերակից սուրբ կույսերի տեղը և նրանք նման էին շատ բարձր սյուների, որոնց գլուխները հասնում էին մինչև երկնքի բարձունքները։ 35 Ապա տեսա երեք ոսկե շատ բարձր խաչեր, որոնց վրա բարձրանում էր մի հսկա զմբեթ, որը հուզվ բարձր էր։ 36 Ապա տեսա երեսուն և յոթը նահատակ կույսեր, որոնց հագուստները փայլում էին ձյան նման։ 37 Հետո տեսա նրանց մեծակեղում մի հրաշալի բարձր աթոռ։ 38 Եվ լուսեղեն մարդը, որն ինձ էր ընկերակցում, ասաց ինձ Ո՞վ Գրիգորիոս, ի՞նչ ես զարմանում Աստվուու պարգևով [որ տվել է] իր ծառային, այլ մտածիր և իմացիր, թե ինչո՞ւ բացվեց երկնքի դուրս որպես վկայություն, որ Աստվուու գթությունը տարածվում է իր արարածների վրա։ Արդ, պահիր այս ավանդը, որը քեզ տվել է Տեր Հիսուս և կառուցիր այս քաղաքում Աստվուու համար մի տաճար քո տեսած օրինակով և հոգ տար նահատակ Հոփիսիմեի եկեղեցու շինությանը, այնքան, ինչքան որ տեսար նրա շնորհը Աստվուու առաջ և որպեսզի երկրի ժողովուրդը մեկ լինի Տեր Հիսուսով, Որդովն

Աստուծու: 39 Եվ երբ ինձ ասաց այս, թաքնվեց ինձանից և այլևս շտեսա ես նրան: Ահա ես հայտնեցի ձեզ նրա բոլոր խոսքերը: 40 Իսկ այժմ, ո՞վ սիրելի եղբայրներ, մեր մտքերը պետք է բարձրանան դեպի նա, որպես պետք է բարձրանան դեպի նա, որպես պետք նա մեր մեղքերին թողովիուն եկեղեցիների կառուցմամբ: 42 Երբ այս ասաց, նրանք հրամայեցին, որ անհապաղ կառուցվի շենքը և նրանցից ամեն մեկը եռանդով և մեծ ուրախությամբ գալիս էր դեպի շինությունը: 43 Այսպիսով կառուցեցին մի մեծ եկեղեցի Սուրբ Կույս Հոփիսիմեի անվան, ինչպես նաև շատ վայրեր սրբերի անոններով և այն լրացրեցին ամեն տեսակ բարիքներով ու գեղեցկությամբ, և զարդարեցին ոսկով ու արծաթով, և գրեցին դրանց մեջ սրբերի մարմինները մեծ հարգանքով: 44 Իսկ Սուրբն Գրիգորիոս նայում էր թագավորին, որն իր սարսափելի կերպարանքով հսկայական քարեր և մեծ սյուներ էր կրում և բերում սրբերի եկեղեցին և շատ էր տանջվում իր մեջ բնակվող սատանայից: 45 Իսկ բազմությունը իննդրեց, որ նա բուժի արքային և Սուրբը խղճաց նրան և աղոթեց նրա համար առ Աստված: 46 Նոյն րոպեին նրա մարմնից ընկապ աղած ձկան կեղեկի նման մի բան և քերթվեցին նրա վրայից խոզանման մազերը և վերստին ստացավ ադամական կերպարանք և մարդկային գեղեցիկ պատկեր: Նրա վրա մնացին միայն եղանգները, որպեսզի այն տեսնելիս համեստանա և հիշի Աստուծու գործերը, զղալով նրա սրբերի նկատմամբ իր գործած վատ արքաբների համար և միշտ թողություն խնդրի իր մեղքերի համար: 47 Իսկ արքան երկար աղոթեց առ Աստված, որը նրան դուրս էր բերել խավարից դեպի հսկական լուս և որը կենդանացնում է բոլոր նրանց, ովքեր գալիս են նրան: Եվ լուսավորվեց այդ երկիրը աստվածային գիտակցությամբ:

48 Այդ ժամանակ հրամայեց, որ հայտարարվի թագավորության բոլոր ծայրերի բնակիչներին, որ ոչ ոք չմնա, որը չգա իր պալատը և այդպես էլ եղավ: 49 Եվ նստեցին ահով ու վախով լսելու Տեր Գրիստոսի ուսմունքը և կենարար պատվիրանները նրա ծառայի՝ Սուրբ Գրիգորիոսի բերանից: 50 Սովորեցրեց նրանց Տիրոջ ճանապարհով դեպի կատարելություն և հավատացին Տիրոջ Գրիստոսին իսկական անկեղծ հավատով: 51 Ասացին Սրբին՝ ի՞նչ անենք, որ նա ների մեղքերը 52 Ասաց նրանց Սուրբը՝ Մի երեց խնդրեցիր ձեզ համար, որպեսզի ձեզ մկրտության լվացումը տա, քանզի ես քահանա շեմ:

53 Իսկ նրանց խնդրեցին նրան, որ լինի հովիվ և առաջնորդ իրենց վրա, իսկ նա շնամաձայնվեց այդ բանին, այլ ասաց՝ ես յի մեղավոր մարդ եմ և արժանի չեմ այդ պատվավոր աստիճանին, 54 Եվ երբ գիշեր էր, երկեցավ Աստուծու հրեշտակը սուրբ թագավորին, որը դարձավ հավատացյալ քրիստոնյա և ասաց նրան. Ինչո՞ւ դու անփոյթ ես քո և քո ժողովրդի հոգու փըրկության համար: Վեր կաց հիմա արագ կերպով և նամակ ուղարկիր ու հայտնիր Հոռմի տիրոջը այն մասին, թե ինչպես ձեզ հասավ մեր Տիրոջ՝ Քրիստոսի ողորմությունը: Ուղարկիր Գրիգորիոսին, որպեսզի նրան ձեզ համար պատրիարք ձեռնադրեն, քանզի դուք յունեք այլ առաջնորդ: Նա է, որ պատճառ կդառնա ձեր փրկության և ձեր՝ երկնքի արքայությունը մտնելուն: Եվ երբ նրան այս ասաց, անհայտացավ: 55 Իսկ արքան այս մասին իմաց տվեց նախարարներին և թագավորությունը տնօրինողներին և շուտափոյթ ժողովի նստեցին և թուղթ գրեցին Կառուցիոսին՝ Կեսարիայի արքեպիսկոպոսին, տեղյակ գարձնելով իրենց պատահածի մասին և թե ինչպես դարձան Աստուծու ճանաշմանը մեր Սուրբ Գրիգորիոսի ձեռքով և իննդրեցին, որ նրան պատրիարք ձեռնադրի: 56 Սրբ հետ մեկտեղ ընծաներ ուղարկեցին թագավորին, պատրիարքին և թագավորության բոլոր մարդկանց: 57 Երբ գեսպանները Կեսարիա հասան և նրանց հետ Գրիգորիոսին ու ընծաները, մտան քաղաք, ողջունեցին թագավորին և նամակներին կարդացին և նամակները նրան հանձնեցին: Կարդաց նա և շատ ուրախացավ հայերի գարծովն առ Աստված: 58 Եվ հրավիրեց պատրիարքին, ու հայտնեցին նրան անցուդարձերի մասին: Սա շատ ուրախացավ և փառաբանեց զետեղած գլուխով՝ «Մեծ են գործերը քո, ո՞վ Տեր, և ամեն ինչ իմաստությամբ է կատարվում»: 59 Ապա նրանք ժունկի իշան Սուրբ Գրիգորիոսի առաջ և իննդրեցին աղոթել իրենց համար և նա օրհնեց նրանց: 60 Սրբանից հետո վեր կացան ու գնացին եկեղեցի և երկար աղոթքներ կարդացին Աստուծու և ձեռնադրեցին Գրիգորիոսին Հայոց երկրի և նրա բոլոր նահանգների պատրիարք և երկնքով ու երկրում արձակելու ու կապելու իշխանություն ստացավ: 61 Սրբանից հետո յոթն օր անց կացրեց քաղաքում և ապա հեռացավ նրանցից, որպեսզի ի կատար ածի այն գործը, որի համար Աստված պատրաստել էր նրան: Շատ ընծաներ ստացավ թագավորից և պատրիարքից Կեսարիայում, գրքեր՝ ընթերցման համար, սպաներ՝ եկեղեցիների համար և յուղ՝ սուրբ հոգով օժման համար:

62 Սրանից հետո վերադարձավ և մտավ Արտաշատ քաղաքը և նրա բնակիչները, բոլոր մեծամեծները, նախարարները և արքան գուրս եկան նրան դիմավորելու և մեծ փառով ու պատվով քաղաքը մտցրին նրան։ 63 Իսկ նա հանձնարարեց նրանց ծոմապահություն և աղոթք և նրանք կատարեցին այն մեծ սիրով։ 64 Ապա հավաքեց նրանց և մտցրեց մեծ Կաթողիկե Տաճարը և կատարեց մկրտությունը և թրչեց նրանց սուրբ ջրով և ստացան Սուրբ Հոգու շնորհը և հաղորդվեցին սուրբ խորհուրդներով Աստուծու Միածին Որդու մարմնով ու արյամք, որը նա թափել է աշխարհի մեղքերի համար։ 65 Եվ այդ օրը՝ մեծ նշան երկեցավ՝ մի լուսեղին մեծ և սբանչելի խաչ այն գետի վրա, որի մէջ մկրտվեցին և շվերացավ մինչև օրվա վերջը։ 66 Սրանից հետո նստեցին լսելու Աստուծու խոսքերը, որոնք նա խոսել է իր սուրբ մարգարեների և առաքյալների բերանով։ Նրանք շատ գոհունակություն զգացին այս բաներից և շատ փառավորեցին զԱստված այն անհամար շնորհների համար, որ պարզեց էր նրանց։ 67 Եվ այսպես Սուրբ Հայր Գրիգորիոս ձեռնադրեց քահանաներ, տիրացուներ և եպիսկոպոսներ իր շրջած բոլոր քաղաքների և գյուղերի համար։ 68 Նա ամենուրեք շատ հոգ էր տանում եկեղեցիների շինությանը, քրիստոնեության հիմքերի բարձրացմանը և ամրապնելու հավատացյալների հավատն առ Տեր Քրիստոս, Որդին կենդանի Աստուծու։ 69 Եվ նրանցից ոմանք թողեցին աշխարհը, հեռացան մարդկանցից և ապրեցին անապատում, հանձնվելով Աստուծու և խնդրելով Հոգու փրկությունը։ 70 Իսկ թագավորը շատ էր ծոմ պահում, կատարում էր աստվածահանությունը և ակնկալում Աստուծու բարությունը ու գթությունը, որի օրհնությունը նրա մարմնի վրա էր որպես հիշեցում չսալթաքելու համար, այսինքն՝ այն, որ նրա ձեռքի և ոտքի եղունգները խոզի եղունգների նման էին։

71 Եվ եկան նրա մոտ և հայտնեցին, որ Գրիգորիոս պատրիարքն ունի երկու սուրբ որդիներ, որոնք ապրում էին Կապադովկիայում։ 72 [Մարդ] ուղարկեց արքան և բերել տվեց նրանց։ Եվ երր եկան, շատ ուրախացավ, որովհետև Աստուծու օրհնությունը նրանց վրա էր։ Նրանցից մեկը կոշվում էր Արիստուակես, իսկ մյուսը՝ Հովհաննես¹², 73 Եվ Սուրբ Գրիգորիոսը այլևս հաճախ շէր այցելում քաղաքը, այլ թափառում էր անապատներում և ամայի վայրերում աստվածահանությունը գործեր կատարելով։ 74 Իսկ ար-

քան կանչեց նրան և ասաց՝ ինչո՞ւ մենք որբ մնացինք, առանց քեզ, ո՞վ հայր Գրիգորիոս։ 75 Եվ ասաց նրան Սուրբը՝ Ես ամենայն ժամ ձեզ հետ ներկա եմ հոգով։ 76 Ասաց նրան արքան՝ Խնդրում եմ քեզանից, որ քո որդուն Արիստակեսին եպիսկոպոս ձեռնադրես, որպեսզի մեղ հովվի բարձրյալն Աստուծու վախով և երկուշածությամբ։ 77 Իսկ Սուրբ Գրիգորիոսը լսեց արքայի խոսքը և ձեռնադրեց Արիստակեսին քահանա և ապա եպիսկոպոս Հայոց երկրին։ 78 Եվ թողեց նրանց Սուրբ Գրիգորիոսը և գնաց գեպի լեռները, քարանձավներն ու ավաները՝ որպեսզի կատարի այն, ինչ հանու է բարձրյալն Աստուծու, փառք նրան։

79 Այդ օրերին որդուում ընդունեց բարեպաշտ և աստվածավախ Կոստանդին արքան և հավաքեց երեք հարյուր տասնութիւնը աստվածավախ ժողովը։ 80 Իսկ Տրդատ արքան շտապ շարժվեց և իր հետ ատանելով Սուրբ Գրիգորիոս պատրիարքին, նրա երկու որդիներին, շատ բազմություն քաղաքից և իր բոլոր բանակներն ու զորքերը, գնաց Կոստանդին արքայի մոտ։ 81 Մտան նրա մոտ, ողջունեցին նրան և հայտնեցին այն, ինչ որ կատարվել էր իրենց մոտ, իսկ նա շատ հրձվեց և փառք տվեց Աստուծու։ 82 Իսկ այս Սուրբը (իմա՝ Գրիգորիոսը) ուղիղ հավատի համար հավաքված հայրերից մեկն էր։ 83 Եվ երբ անցան շատ օրեր, վերադարձան իրենց քաղաքը։

84 Եվ կամեցավ Աստված, փառավորյալ և ինի նրա անունը, փոխադրել այս Սուրբ Գրիգորիոսին այս վաղանցով՝ աշխարհից, և մի քիչ հիվանդացրեց նրան։ 85 Իսկ նա մտավ եկեղեցին, հավաքեց քրիստոնյա ժողովրդին և քարոզեց նրանց հավատարիմ մնալ ուղիղ հավատին և շթեքվել ոչ աշ ոչ էլ ձախ իրենց սովորած պատվիրաններից։ 86 Երբ այս ասաց, օրհնեց նրանց, միխթարեց, ողջուն տվեց և հանձնեց հովիվների մեծ և իսկական Հովվին, հավերժական ուստի արյամք Տեր Հիսուս Քրիստոսին՝ կենդանի Աստուծու Որդուն։ 87 Եվ թեքեց իր երեսը զեպի Արևելք և խաչակրեց ինքն իրեն սուրբ խաչի նշանով։ Սրանից հետո բացեց բերանը և ավանդեց հոգին Տիրոց ձեռքը Քիհաք ամսի տասնհինգին։ 88 Կատարվեց նրա սուրբ ձգումը և ստացավ պսակը, քանզի խոստովանեց և ընդունեց մեր տիրոց Հիսուսի Քրիստոսի անվան շատ տանջանքներ և ստացավ մի [ուրիշ] պսակ պատրիարքության աստիճանի համար, որովհետև հովվեց խոսուն ոչ խարների հոտը և վերադարձրեց նրանց ճշմարտության ճանաշղողությանը, և [ևս] մի պսակ՝ Տեր Քրիստոսին ավետելուն հա-

մար: Եվ գնաց դեպի հավիտենական երանությունը և երանելի դարձավ բոլոր սրբերի հետ: 89 իսկ արքան և քաղաքի ամրող ժողովուրդը ցավեցին նրա կորստյան համար և արտասվեցին նրա վրա դառն արտասուրզ, քանզի նա բարի հայր էր և գիտակից հովիվ: 90 Եվ շատապեցին ու փաթաթեցին նրա սուրբ մարմինը անբիծ և մաքուր պատանքով, օծեցին թանկարժեք անուշահովություններով, նրա վրա բազմաթիվ աղոթքներ կատարեցին և դրեցին եկեղեցու մեջ մեծ փառքով ու ծայրահեղ հարգանքով:

91 Եվ Տերը նրանից ցույց տվեց վկայություններ, հրաշքներ, բժշկումներ և ծանր ախտավորների հիվանդության բուժման անհամար ապացուցներ ու կուրքերի լուսավորումներ և ընդհանրապես ով որ մերձեցավ նրա սուրբ մարմնին՝ իր բոլոր հիվանդություններից բուժման ստացավ:

92 Իսկ մենք այժմ հայցում ենք Տեր Հիսուս Քրիստոսին, որը մարդացավ անարատ Սուրբ Մարիամից մեր՝ մարդկանց փրկության համար, բարեխնոսությամբ այն պատվական պատրիարքին, որպեսզի [նա] ների մեր մեղքերն ու շարագործությունները և ծածկի մեր մեղանչումները և մեզ [արժանի] դարձնի վաստակելու բարի գործեր, նախքան վախճանի մերձենալը և վերջ տա սատանայի հարվածներին և ժամանակավոր պատուհասներին ու մարմնական հիվանդություններին, ներշնչի մեզ թաքուն և հայտնի ընդունելու նրա պատվիրաններն ու հրամանները և գործելու նրա ցանկության և

արգելքների համաձայն, և [որպեսզի] նրա տաճարի դուռը միշտ բաց պահի ձեր դիմաց բոլոր ժամանակներում, ամաչեցնի նրան հալածող թշնամիներին և մեղ արժանի դարձնի ճաշակելու նրա անարատ մարմինն ու ազնիվ արյունը, որով եղավ փրկությունն Աղամի ու նրա ցեղին և բարձրացնի մեր նեղութ, քաղցրացնի մեր բարիքների պտուղները, դաստիարակի մեր մանուկներին, հովանավորի մեր այրիներին, ուժեղացնի մեր ծերերին, առողջություն պարգևի մեր զառամյալներին, մաքրություն՝ մեր աղջիկներին և մեզ լսելի դարձնի ձայնը, որ ասում է՝ «Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցք զպատրաստեալ ձեզ զարբայութինն ի սկզբանէ աշխարհի» (Մատթ. ի 24), ոզոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուսա և ի սիրու մարդոց ոչ անկաւ (Կորնթ. Բ 9), բարեխոսությամբ մեր Տիրուհո՛ անարատ Սուրբ Կույս Աստվածածին Մարիամի և բոլոր սրբերի ու նահատակների և նրանց, որոնք գոհացրել են Տեր Աստուծուն իրենց բարի գործերով, Աղամի ցեղից մինչև այժմ և միշտ և դարե դար, ամեն, ամեն:

Վերջարան

Հիշիր, ո՞վ Տեր, քո մեղավոր, խեղճ և մեղքերի ու հանցանքների ծովի մեջ խեղդված ծառային, որը չի կարողացել հիշել իր անունը մարդկանց մեջ, քո ծառա Գիրգիսին:

Հիշիր նրան, Տե՛ր, հրկնային արքայության մեջ:

